ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 62 ,, 22 ,, նոյեմբերի 2018թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին,, օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի, <<ա>> ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 18 քաղաքացիների հատկացնել 1230000 (մեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար) դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ